ա. Այս ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի տիրապետում է Կազմակերպության՝ ծայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 20 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 20 և ավելի տոկոս մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Մասնակցությունը կարող է լինել Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (ուղղակի մասնակցություն) կամ Կազմակերպության բաժնեմասին (բաժնետոմսին, փային) տիրապետող այլ իրավաբանական անձի բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) սեփականության իրավունքով տիրապետելու ուժով (անուղղակի մասնակցություն): Անուղղակի մասնակցությունը կարող է իրականացվել անկախ ֆիզիկական անձի և Կազմակերպության բաժնեմասը (բաժնետոմսը, փայը) տիրապետող իրավաբանական անձի շղթայում առկա միջանկյալ իրավաբանական անձանց քանակից: «Մասնակցության չափը» դաշտում նշվում է Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության չափը՝ տոկոսային արտահայտմամբ: Մասնակցության չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով իրական շահառուի ուղղակի և անուղղակի մասնակցության արդյունքում Կազմակերպության կանոնադրական կապիտալում մասնակցության բոլոր տոկոսների հանրագումարը: Անուղղակի մասնակցության դեպքում, կազմակերպության կանոնադրական կապիտալում իրական շահառուի մասնակցությունը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր նախորդ միջանկյալ կազմակերպության մասնակցության չափը, այն է՝ Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափը բազմապատկելով Կազմակերպության մասնակից իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համապատասխան մասնակցի՝ տոկոսային արտահայտմամբ մասնակցության չափով, և այդպես շարունակ մինչև իրական շահառուին հասնելը: «Մասնակցության տեսակը» դաշտում կատարվում է նշում կանոնադրական կապիտալում մասնակցության ուղղակի կամ անուղղակի լինելու մասին: Կանոնադրական կապիտալում և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության դեպքում նշում է

կատարվում միաժամանակ և՛ ուղղակի, և՛ անուղղակի մասնակցության առկայության վերաբերյալ.

բ. Այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա» կետի իմաստով չի հանդիսանում կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է Կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

գ. Այս ենթաբաժնի «գ» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա» և «բ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

6) «Իրական շահառու հանդիսանալու հիմքերը (ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպությունների համար)» ենթաբաժինը լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն: Իրական շահառուների բացահայտումն իրականացվում է Ընդերքի մասին օրենսգրքով սահմանված չափանիշներով: Այս ենթաբաժնում նշումները կատարվում են սույն կարգի 4.5-րդ կետում սահմանված կանոնների հաշվառմամբ: Այս ենթաբաժնում հիմքերի վերաբերյալ տվյալները լրացվում են հետևյալ կանոններով.

ա. Այս ենթաբաժնի «ա» կետում կատարվում է նշում, եթե ֆիզիկական անձը ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ծայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) 10 և ավելի տոկոսին կամ ուղղակի կամ անուղղակի կերպով ունի 10 և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում: Այս ենթաբաժինը լրացվում է սույն կարգի 4-րդ կետի 5-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված կանոնների հաշվառմամբ.

բ. Այս ենթաբաժնի «բ» կետում կատարվում է նշում, եթե անձն իրավունք ունի նշանակելու կամ հեռացնելու իրավաբանական անձի կառավարման մարմինների անդամների մեծամասնությանը.

գ. Այս ենթաբաժնի «գ» կետում կատարվում է նշում, եթե անձը Կազմակերպությունից անհատույց ստացել է հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում տվյալ իրավաբանական անձի ստացած շահույթի առնվազն 15 տոկոսի չափով օգուտ.

դ. Այս ենթաբաժնի «դ» կետում կատարվում է նշում, եթե անձն «ա»-«գ» կետերի իմաստով չի հանդիսանում Կազմակերպության իրական շահառու, սակայն վերահսկում է

կազմակերպությունը՝ իրավական գործիքների (այդ թվում՝ կնքված գործարքների) ուժով, այլ բնույթի անձնական ազդեցության հիման վրա կամ այլ միջոցներով.

ե. Այս ենթաբաժնի «ե» կետում կատարվում է նշում, եթե անձը հանդիսանում է Կազմակերպության գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումն իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, երբ առկա չէ այս ենթաբաժնի «ա»-«դ» կետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ.

7) «Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները» ենթաբաժնում լրացվում են անձի՝ Կազմակերպության իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին: Այս ենթաբաժնում կատարվում է նշում իրական շահառուի կողմից Կազմակերպության նկատմամբ վերահսկողության իրականացման ձևի վերաբերյալ: Փոխկապակցված անձանց հետ համատեղ վերահսկողության իրականացման վերաբերյալ կատարվում է նշում, եթե իրական շահառուն Կազմակերպությունը վերահսկում է իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու ուժով կամ կարող է այն վերահսկել իր հետ փոխկապակցված անձի հետ համաձայնեցված գործելու դեպքում: Եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձը հանդիսանում է ընդերքօգտագործման ոլորտի հաշվետու կազմակերպություն, այս ենթաբաժնում նաև կատարվում է նշում իրական շահառուի՝ Ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 53-րդ կետի իմաստով պաշտոնատար անձ կամ նրա ընտանիքի անդամ հանդիսանալու վերաբերյալ.

8) «Իրական շահառուի կոնտակտային տվյալները» ենթաբաժնում լրացվում են իրական շահառուի էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը:

5. Հայտարարագրի 5-րդ բաժինը (Միջանկյալ իրավաբանական անձինք) լրացվում է, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի իրական շահառուն կամ Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձն ունի անուղղակի մասնակցություն Կազմակերպության կանոնադրական կապիտալում: Այս բաժինը ենթակա է լրացման յուրաքանչյուր միջանկյալ իրավաբանական անձի համար առանձին՝ բոլոր միջանկյալ իրավաբանական անձանց քանակով: Այս բաժնում ենթաբաժինները լրացվում են հետևյալ կանոններով.

1) «Կազմակերպության տվյալները» ենթաբաժնում լրացվում են միջանկյալ իրավաբանական անձի անվանումը (այդ թվում՝ լատինատառ) և գրանցման տվյալները՝ ներառյալ նշում կազմակերպաիրավական ձևի մասին.



2) «Իրական շահառուի տվյալները» ենթաբաժնում լրացվում են այն իրական շահառու(ներ)ի անունը և ազգանունը, ում համար այս ենթաբաժնում լրացված կազմակերպությունը հանդիսանում է միջանկյալ իրավաբանական անձ: Եթե միջանկյալ իրավաբանական անձանց տվյալները լրացվում են Կազմակերպությունն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի համար, այս ենթաբաժինը ենթակա չէ լրացման:

3) «Միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման տվյալները» ենթաբաժինը ենթակա չէ պարտադիր լրացման: Այս ենթաբաժինը կարող է լրացվել, եթե միջանկյալ իրավաբանական անձի բաժնետոմսերը ցուցակված են կարգավորվող շուկայում: Այս ենթաբաժնում լրացվում է ֆոնդային բորսայի անվանումը՝ փակագծերում նշելով նաև բորսայի ծածկագիրը (Market Identifier Code), որտեղ ցուցակված են իրավաբանական անձի բաժնետոմսերը, ինչպես նաև կատարվում է հղում բորսայում առկա փաստաթղթերին:

6. Հայտարարագրի 6-րդ բաժինը (Լրացուցիչ նշումներ) լրացվում է, եթե առկա են լրացուցիչ տեղեկություններ կամ հավելյալ պարզաբանումներ, որոնք առնչվում են հայտարարագրում լրացված կամ լրացման ենթակա տվյալներին: Այս ենթաբաժնում կարող են լրացվել հավելյալ պարզաբանումներ իրական շահառուի կողմից Կազմակերպությունը վերահսկելու հիմքերի վերաբերյալ, պետության (համայնքի) այն մարմինների վերաբերյալ, որոնք իրականացնում են Կազմակերպության վերահսկողությունն այն դեպքում, եթե հայտարարագիրը ներկայացնող իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում առկա է պետության կամ համայնքի ուղղակի կամ անուղղակի մասնակցություն, և այլ պարզաբանումներ հայտարարագրի առնչությամբ:

7. Հայտարարագիրը լրացնում և ստորագրում է հայտը ներկայացնող անձը:

*\*\* 1.2 հավելվածը չի ներկայացվում մասնակցի կողմից եթե կրառելի է սույն հրավերի N 1 հավելվածով սահմանված՝ իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը ներկայացնելու վերաբերյալ կարգավորումը, ինչպես նաև եթե մասնակիցը անհապ ձեռնարկարեր է կամ ֆիզիկական անձ:*

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով «ՁԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, \_\_\_\_\_-ն առաջարկում է  
մասնակցի անվանումը  
պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

ՀՀ դրամ

| Չափա-<br>բաժինների<br>համարներ<br>ը | Ապրանքի անվանումը                        | Արժեք<br>(ինքնարժեքի և<br>կանխատեսվող<br>շահույթի<br>հանրագումարը)<br>/տառերով և թվերով/ | ԱԱՀ**<br>/տառերով և<br>թվերով/ | Ընդհանուր<br>գինը<br>/տառերով և<br>թվերով/ |
|-------------------------------------|------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------|--------------------------------|--------------------------------------------|
| 1                                   | 2                                        | 3                                                                                        | 4                              | 5=3+4                                      |
| 1                                   | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> |                                                                                          |                                |                                            |
| 2                                   | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> |                                                                                          |                                |                                            |
| 3                                   | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> |                                                                                          |                                |                                            |
| ...                                 | ...                                      |                                                                                          |                                |                                            |
| ...                                 | ...                                      |                                                                                          |                                |                                            |

մասնակցի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ.

\*Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:

**ԵՐԱՇԽԻՔ N \_\_\_\_\_**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է \_\_\_\_\_  
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից \_\_\_\_\_ ծածկագրով կազմակերպված  
ընթացակարգի ծածկագիրը

գնման ընթացակարգին \_\_\_\_\_ (այսուհետ՝ պրիցիպալ) մասնակցելուց  
մասնակցի անվանումը

բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված  
պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով \_\_\_\_\_ (այսուհետ՝ երաշխիք տվող  
երաշխիքը տվող բանկի անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում  
ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել \_\_\_\_\_  
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը  
կատարվում է բենեֆիցիարի \_\_\_\_\_ հաշվեհամարին փոխանցման միջոցով:  
հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է  
փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի կողմից \_\_\_\_\_ ծածկագրով  
ընթացակարգի ծածկագիրը

կազմակերպված գնման ընթացակարգին մասնակցելու նպատակով պրինցիպալի կողմից հայտը ներկայացնելու  
օրվանից հաշված ինսուն աշխատանքային օր: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ  
տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված  
ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր  
պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է \_\_\_\_\_ սույն կետում նշված գնման ընթացակարգի  
հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից  
ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց  
հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից  
փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան  
նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի  
համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության  
օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար \_\_\_\_\_

ԵՐԱՇԽԻՔ N \_\_\_\_\_  
(որակավորման ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է \_\_\_\_\_  
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից \_\_\_\_\_ ծածկագրով կազմակերպված  
ընթացակարգի ծածկագիրը

գնման ընթացակարգի արդյունքում \_\_\_\_\_  
ընտրված մասնակցի անվանումը

(այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N \_\_\_\_\_  
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման  
ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով \_\_\_\_\_ (այսուհետ՝ երաշխիք տվող  
երաշխիքը տվող բանկի կամ ապահովագրական կազմակերպության անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում  
ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել \_\_\_\_\_  
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը  
կատարվում է բենեֆիցիարի \_\_\_\_\_ հաշվեհամարին փոխանցման միջոցով:  
հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է  
փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N \_\_\_\_\_  
կնքվելիք պայմանագրի համարը

ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև \_\_\_\_\_  
կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքի

մատակարարման վերջնաժամկետը

օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված  
տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի  
հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման  
ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից  
ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N \_\_\_\_\_ ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում  
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող  
տեղեկագրում հրապարակված ծանուցումը.

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց  
հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից  
փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան  
սույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի  
համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության  
օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար \_\_\_\_\_

---

ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

**ԵՐԱՇԽԻՔ N \_\_\_\_\_**  
**(որակավորման ապահովում)**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է \_\_\_\_\_  
պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից \_\_\_\_\_ ծածկագրով կազմակերպված  
ընթացակարգի ծածկագիրը

կազմակերպված գնման ընթացակարգի արդյունքում \_\_\_\_\_  
ընտրված մասնակցի անվանումը

(այսուհետ՝ պրիցիպալ) կողմից կնքվելիք N \_\_\_\_\_  
կնքվելիք պայմանագրի համարը

պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ):

2. Երաշխիքով \_\_\_\_\_ (այսուհետ՝ երաշխիք տվող  
երաշխիքը տվող բանկի կամ ապահովագրական կազմակերպության անվանումը

անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում  
ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել \_\_\_\_\_  
գումարը թվերով և տառերով

(այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց տասը աշխատանքային օրվա ընթացքում: Երաշխիքի գումարը վճարելուց հաշվի է առնվում պայմանագրի կատարման շրջանակում բենեֆիցիարի և պրիցիպալի միջև երկկողմ հաստատված և պրիցիպալի կողմից երաշխիքը տված անձին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության (արձանագրությունների) հիման վրա երաշխիքի գումարից կատարված նվազեցումները:

Վճարումը կատարվում է բենեֆիցիարի \_\_\_\_\_ հաշվեհամարին  
փոխանցման միջոցով:

հաշվեհամարը

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է բենեֆիցիարի և պրիցիպալի միջև N \_\_\_\_\_  
կնքվելիք պայմանագրի համարը

ծածկագրով կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև \_\_\_\_\_  
կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքի

մատակարարման վերջնաժամկետը,

օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ: Սույն երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) N \_\_\_\_\_ ծածկագրով կնքված պայմանագրի, ներառյալ նաև դրանում  
կնքվելիք պայմանագրի համարը

կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները.

2) բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը.

3) պայմանագրի շրջանակում բենեֆիցիարի և պրիցիպալի միջև երկկողմ հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը (արձանագրությունները) կամ դրա (դրանց) պատճենները:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր մարմնի ղեկավար \_\_\_\_\_

\_\_\_\_\_

ամիսը, ամսաթիվը, տարեթիվը

**ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ**  
**(որակավորման ապահովում)**

ք. Երևան

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.\*\*

\_\_\_\_\_ ի դեմս Ընկերության տնօրեն \_\_\_\_\_  
Ընկերության անվանումը Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Ընկերությունը մասնակցում է «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակից, կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ որակավորման ապահովում, Ընկերությունը, Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի (այսուհետև՝ Պահանջագիր) ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ՝

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետև՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում, եթե այն հանգեցնում է Պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծման, Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է ՀՀ ԱԲՈՒԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):



## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Պատվիրատուի կողմից կնքված պայմանագրի կատարման արդյունքը ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող քսաներորդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2. Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

## 3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

|                                        |
|----------------------------------------|
| Ընկերության անվանումը                  |
| Ընկերության հասցեն                     |
| Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը |

Կ.Տ

Օր/ամիս/տարի

\* լրացվում է հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ մինչև հրավերը տեղեկագրում հրապարակելը:

|                                                                                                                                                                          |                                                                                            |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------|
| 1. <b>ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ*</b>                                                                                                                                            |                                                                                            |
| 2. Թիվ                                                                                                                                                                   |                                                                                            |
| 3. Ներկայացման ամսաթիվը՝ " ____ " ____ 20__թ.                                                                                                                            |                                                                                            |
| 4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝                                                                                                                  |                                                                                            |
| 5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝                                                                                                                |                                                                                            |
| 6. Վճարողի հաշվի համարը՝                                                                                                                                                 |                                                                                            |
| 7. Վճարողի ՀՎՀՀ՝                                                                                                                                                         |                                                                                            |
| 8. Վճարողի ՀԾՀ՝                                                                                                                                                          |                                                                                            |
| 9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ <b>«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ</b>                                                                                |                                                                                            |
| 10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)                                                                                                                                           |                                                                                            |
| 11. Շահառուի ՀՎՀՀ՝ <b>09423966</b>                                                                                                                                       |                                                                                            |
| 12. Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <b>Երևանի թիվ 1 ՏԳԲ</b>                                                                                      |                                                                                            |
| 13. Շահառուի հաշվի համարը (հշ.Ն) <b>900018003286</b>                                                                                                                     |                                                                                            |
| 14. Գումարը (թվերով և բառերով)՝                                                                                                                                          |                                                                                            |
| 15. Ակցեպատվորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)                                                       |                                                                                            |
| 16. Արժույթը (բառերով և կոդով)՝                                                                                                                                          |                                                                                            |
| 17. Գործարքի (վճարման) նպատակը՝ <i>(որակավորման ապահովման համար)</i>                                                                                                     |                                                                                            |
| 18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը) |                                                                                            |
| 19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>                                                                                                                          |                                                                                            |
| 20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ                                                                                                                                           |                                                                                            |
| 22.ա. Շահառուի ստորագրությունները<br><br>/_____<br><br>/_____<br><br>22.բ.<br><br>Կ.Տ.                                                                                   | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝<br><br>/_____<br><br>/_____<br><br>21.բ.<br><br>Կ.Տ.     |
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/_____<br><br>/ստորագրություն/                                                                              | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/_____<br><br>/ստորագրություն/ |

|       |                          |                          |                          |
|-------|--------------------------|--------------------------|--------------------------|
| 24.բ. | Կ.Տ.                     | 23.բ.                    | Կ.Տ.                     |
| 24.գ  | " ____ " ____ 20 ____ թ. | 23.գ. Կատարման ամսաթիվը՝ | " ____ " ____ 20 ____ թ. |

*\* Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

**Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման ուղեցույցը**

| Հ/Հ | <<Վճարման պահանջագիր>> փաստաթղթի վավերապայմանները                                     | Նշված դաշտի/ վավերապայմանի առկայությունը փաստաթղթում | Վավերապայմանի լրացման պահանջը (գնումների գործընթացի հետ կապված)                                                                                                                                                                                                                           | Վավերապայմանը լրացնող կողմը՝ շահառուն կամ վճարողը (գնումների գործընթացի հետ կապված) |
|-----|---------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------|
| 1   | 2                                                                                     | 3                                                    | 4                                                                                                                                                                                                                                                                                         | 5                                                                                   |
| 1.  | Փաստաթղթի անվանումը                                                                   | Պարտադիր                                             | պարտադիր                                                                                                                                                                                                                                                                                  | Փաստաթղթի վրա նախապես լրացված է <Վճարման պահանջագիր>                                |
| 2.  | վճարման պահանջագրի համարը                                                             | Պարտադիր                                             | պարտադիր                                                                                                                                                                                                                                                                                  | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագիրը ներկայացնելիս        |
| 3.  | ներկայացման ամսաթիվը                                                                  | Պարտադիր                                             | պարտադիր                                                                                                                                                                                                                                                                                  | լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը:      |
| 4.  | Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն                                                 | Պարտադիր                                             | պարտադիր<br>լրացվում է այն անձի (վճարողի) անունը, որի հաշվից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը: Լրացվում է վճարողի անունը, ազգանունը, եթե այն ֆիզիկական անձ է կամ անվանումը, եթե այն իրավաբանական անձ է: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության: Լրացվում է վճարողի կողմից | լրացվում է վճարողի կողմից                                                           |
| 5.  | վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը (վճարողի բանկը) | Պարտադիր                                             | պարտադիր                                                                                                                                                                                                                                                                                  | լրացվում է վճարողի կողմից                                                           |
| 6.  | վճարողի հաշվի համարը                                                                  | Պարտադիր                                             | պարտադիր<br>լրացվում է վճարողի բանկային հաշվի համարը իրեն սպասարկող ֆինանսական կազմակերպությունում (մասնաճյուղի), որից պետք է գանձվի պահանջագրով նշված գումարը                                                                                                                            | լրացվում է վճարողի կողմից                                                           |
| 7.  | վճարողի ՀՎՀՀ                                                                          | Պարտադիր                                             | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է հաշվառված հարկատու                                                                                                                                            | լրացվում է վճարողի կողմից                                                           |
| 8.  | վճարողի ՀԾՀ                                                                           | պարտադիր                                             | ոչ պարտադիր<br>լրացվում է Հայաստանի                                                                                                                                                                                                                                                       | լրացվում է վճարողի կողմից                                                           |

|     |                                                                        |          |                                                                                                                                                                                                                                                        |                                              |
|-----|------------------------------------------------------------------------|----------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------|
|     |                                                                        |          | Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ վճարողը հանդիսանում է ֆիզիկական անձ                                                                                                                                                  |                                              |
| 9.  | շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն                                 | Պարտադիր | պարտադիր լրացվում է շահառու հանդիսացող անձի (վճարումը ստացողի) անվանումը: Նշվում են նաև այլ տվյալներ՝ ըստ անհրաժեշտության                                                                                                                              | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 10. | շահառուի ՀԾՀ                                                           | Պարտադիր | ոչ պարտադիր (գնումների հետ կապված գործընթացում չի լրացվում)                                                                                                                                                                                            | (չի լրացվում)                                |
| 11. | շահառուի ՀՎՀՀ                                                          | Պարտադիր | ոչ պարտադիր լրացվում է Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով սահմանված դեպքերում, երբ շահառուն հանդիսանում է հաշվառված հարկատու                                                                                                           | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 12. | շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպության (մասնաճյուղի) անվանումը | Պարտադիր | պարտադիր                                                                                                                                                                                                                                               | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 13. | շահառուի հաշվի համարը                                                  | Պարտադիր | պարտադիր լրացվում է շահառուի այն բանկային (գանձապետական) հաշվի համարը, որի վրա պետք է փոխանցվեն վճարողից գանձված միջոցները                                                                                                                             | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
| 14. | գումարը (թվերով և բառերով)                                             | Պարտադիր | պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը                                                                                                                                                                                                   | լրացվում է վճարողի կողմից                    |
| 15. | Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով)                              | Պարտադիր | ոչ պարտադիր (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը գնումների հետ կապված չի կիրառվում)                                                                                                                                                  | (չի լրացվում եւ չի կիրառվում)                |
| 16. | արժույթը (բառերով և կողով)                                             | Պարտադիր | պարտադիր                                                                                                                                                                                                                                               | լրացվում է վճարողի կողմից                    |
| 17. | գործարքի նպատակը                                                       | Պարտադիր | Պարտադիր լրացվում է «որակավորման ապահովման համար» բառերը                                                                                                                                                                                               | նախապես լրացվում է շահառուի կողմից՝ հրավերով |
